ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 01/2019

ԴԻՄՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **05.12.2019**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ա. Փաշինյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով),

2019 թվականի դեկտեմբերի 5-ին, ուսումնասիրելով «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանի (այսուհետ՝ Դիմումատու) դիմումը, պարզեց.

2019 թվականի նոյեմբերի 29-ին «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանը դիմում է ներկայացրել Հանձնաժողով ***2019թ. հուլիսի 17-ին*** «Ազատություն» լրատվականի գլխավոր խմբագրին տրված հարցազրույցում Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի սկզբունքները (բարեկրթություն և հարգալիրություն)/վարքագծի կանոնները խախտելու վերաբերյալ:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 2017թ. հունիսի 9-ի ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝ յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա:

2. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հանձնաժողովը քննության է առնում դիմումը, եթե այն ներկայացվել է խախտման կամ դեպքի մասին անձին հայտնի դառնալու ***պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում***, սակայն ոչ ուշ, քան խախտման կամ դեպքի պահից վեց ամսվա ընթացքում:

3. Դիմումատուն ընդունել է, որ իր կողմից վկայակոչած ենթադրյալ խախտումների վերաբերյալ տեղեկատվությունն իրեն հասանելի է դարձել 2019

թվականի հուլիսին, սակայն Օրենքով սահմանված ժամկետներում ինքը դիմում չի ներկայացրել 2019 թվականի հուլիսի դրությամբ գործող ***Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով***: Դիմումատուն նշել է, որ 2019 թվականի հուլիսին գործող Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իր պատկերացմամբ չէր կարող համարվել իրավազոր մարմին և քններ հիշյալ հարցը, քանի որ հանդիսանում էր ***հակասահմանադրական մարմին:***

Դիմումի ընդունելիության մասով

4. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
Իրավունքի գերակայության սկզբունքի համաձայն՝ պետական մարմինները պետք է գործեն օրինականության սկզբունքի ներքո, ինչը ***նպատակ է հետապնդում կանխելու լիազորությունների հնարավոր չարաշահումները և հայեցողության կիրառումը:***

5. ՀՀ Սահմանադրության 168-169-րդ հոդվածների համաձայն՝ կոնկրետ հարցի սահմանադրականության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասությամբ օժտված է ՀՀ Սահմանադրական դատարանը:

6. Ավելին՝ Դիմումատուն, թեև իր պատկերացմամբ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեությունը գնահատել է հակասահմանադրական, այնուամենայնիվ, չի ներկայացրել որևէ ապացույց, առ այն, որ 2019 թվականի հուլիսից մինչև նոյեմբերի 29-ը՝ դիմում ներկայացնելու օրը, ձեռնարկել է գործողություններ, որոնց միջոցով կհաստատվեր Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության հակասահմանդրականությունը, և Հանձնաժողովն օրենքով սահմանված բավարար հիմքեր կունենար քննության առնելու ժամկետի խախտմամբ ներկայացված դիմումը և դիմումի մեջ ներկայացված ենթադրյալ խախտումների վերաբերյալ համապատասխան որոշում կայացնել:

7. Վերը նշված փաստերը և դրանց առնչությամբ առկա իրավակարգավորումները հաստատում են, որ Հանձնաժողովը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության սահմանադրականությունը գնահատելու և այդ հիմքով ժամկետների խախտմամբ ներկայացված դիմումն ընդունելի համարելու իրավասություն չունի:

Ելնելով վերոնշյալից և ղեկավարվելով Օրենքի 28-րդ հոդվածով՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ո ր ո շ ե ց.

1. «Քաղաքացիական գիտակցություն» ազատական հասարակական կազմակերպության նախագահ Նարեկ Սամսոնյանի կողմից 2019 թվականի նոյեմբերի

29-ին Հանձնաժողով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից վարքագծի սկզբունքները (բարեկրթություն և հարգալիրություն)/վարքագծի կանոնները խախտելու վերաբերյալ դիմումը թողնել առանց քննության:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ա. ՓԱՇԻՆՅԱՆ

Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ